ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1087 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 243-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի «Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները, սահմանափակում կիրառելու կամ սահմանափակումը վերացնելու վերաբերյալ որոշումներն անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացման կարգը սահմանելու մասին» N 243-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) նախաբանը «2.1-ին մասերի,» բառերից հետո լրացնել «47.3-րդ հոդվածի 6-րդ մասի,» բառերով:

2. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածում.

1) 1-ին կետը «նոտարները» բառից հետո լրացնել «, իսկ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված դեպքերում՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 47.3-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով, ի թիվս սույն կետով սահմանված այլ մարմինների՝ նաև դատարանները,» բառերով.

2) 2-րդ կետը «համապատասխան» բառից հետո լրացնել «, իսկ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված դեպքերում՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 47.3-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով, ի թիվս սույն կետով սահմանված այլ մարմինների՝ նաև դատարանները,» բառերով.

3) 3-րդ կետը «նոտարների» բառից հետո լրացնել «և դատարանների» բառերով.

4) 4-րդ կետում՝

ա. 2-րդ ենթակետը «պալատում» բառից հետո լրացնել «, դատարան-ներում» բառով,

բ. 3-րդ ենթակետը «անձանց» բառից հետո լրացնել «, դատարանները՝ ի դեմս փաստաթղթեր մուտքագրող անձանց» բառերով.

5) 5-րդ կետը «նոտարների» բառից հետո լրացնել «և դատարանների» բառերով, իսկ «պալատի» բառից հետո «, դատարանների» բառով.

6) 10-րդ կետը «մարմինը,» բառից հետո լրացնել «դատարանները,» բառով.

7) 11-րդ կետը «մասով» բառից հետո լրացնել «, իսկ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 47.3-րդ հոդվածով» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի օգոստոսի 4-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում դատարանները «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման

մասին» օրենքի 47.3-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը կարող են ներկայացնել նաև թղթային եղանակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

24.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ